



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

16 հունվարի 2025 թվականի N 36 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N 164-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետությունում չգրանցված կամ որակի պահանջներին չհամապատասխանող կամ պիտանիության ժամկետն անցած կամ գրանցումն ուժը կորցրած ճանաչված կամ գրանցումը կասեցված կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ ներմուծված դեղերի, կեղծ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի մասին ահազանգի ծանուցման, շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը սահմանելու մասին» N 164-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) հավելվածում՝

1) 1-ին կետում «շրջանառությունից հանելու (հետկանչի)» բառերը փոխարինել «շրջանառությունից հանելու (այսուհետ՝ հետկանչի)» բառերով.

2) 2-րդ կետում «առողջապահության» բառը փոխարինել «առողջապահական» բառով.

3) 5-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում «մասնավորապես» բառը փոխարինել «օրինակ» բառով, իսկ 2-րդ ենթակետի «զ» պարբերության «սպեցիֆիկացիաների» բառից հետո լրացնել «կամ որակի նորմատիվ փաստաթղթի կամ դեղագրքերի պահանջների» բառերով.

4) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Հայաստանի Հանրապետությունում հետկանչ իրականացնողները շրջանառության դադարեցումը և հետկանչի կառավարումն իրականացնում են սույն կարգի, իսկ արտադրողները և մատակարարները՝ նաև համապատասխանաբար առողջապահության հարցերով լիազորված պետական կառավարման մարմնի ընդունած «Պատշաճ արտադրական գործունեության» և «Պատշաճ բաշխման գործունեության» կանոնների հիման վրա հաստատված ներքին ընթացակարգերով:».

5) 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Կազմակերպությունը թերությունների մասին ազդանշան ստանալու կամ դրանք հայտնաբերելու դեպքում առավելագույնը 24 ժամվա ընթացքում իրականացնում է թերության գնահատում: Հետկանչի ենթակա թերության (թերությունների) առկայության կասկածի դեպքում Կազմակերպությունը գնահատմանը հաջորդող օրվա ընթացքում շրջանառությունը դադարեցնելու անհրաժեշտության վերաբերյալ եզրակացությունն էլեկտրոնային եղանակով ուղարկում է տեսչական մարմին՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը: Հետկանչի ենթակա թերության առկայության դեպքում Կազմակերպությունը գնահատմանը հաջորդող օրվա ընթացքում տեսչական մարմին է ներկայացնում շրջանառության դադարեցման և հետկանչի իրականացման անհրաժեշտության վերաբերյալ եզրակացություն՝ կցելով հիմնավորող փաստաթղթեր:».

6) 15-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Լրացուցիչ ուսումնասիրություններ պահանջող դեպքերում Կազմակերպությունը մեկամսյա ժամկետը լրանալու հաջորդ օրը տեսչական մարմին է ներկայացնում եզրակացություն՝ շրջանառության դադարեցումը երկարաձգելու անհրաժեշտության վերաբերյալ համապատասխան հիմնավորումներով: Շրջանառությունը դադարեցնելու երկարաձգման առավելագույն ժամկետը վեց ամիս է:»:

7) 20-րդ կետի 4-րդ ենթակետում «:» նշանը փոխարինել «.» նշանով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր՝ 5-րդ ենթակետով.

«5) այլ տվյալներ՝ առկայության դեպքում (օրինակ՝ թերության հայտնաբերման օրը, ամիսը, տարին, ձեռնարկված միջոցառումների նկարագիրը, իրացման տվյալներ):»:

8) 22-րդ կետի 1-ին ենթակետում «վաճառքի» բառը փոխարինել «մեծածախ կամ մանրածախ իրացման» բառերով.

9) 29-րդ կետը «ոչնչացումը հաստատող փաստաթուղթը (ոչնչացման ենթակա դեղերի առկայության դեպքում)» բառերից հետո լրացնել «կամ վերադարձը հաստատող փաստաթուղթը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան